1970 թուականին Լիբանանի մէջ սկսած են հաստատուիլ մանկամտերները, որոնք թիւը այդ թուականին 16 էր, իսկ այսօր անոնց թիւը հասած է աւելի քան 150-ի:

Սկզբնական շրջանին այդ հաստատութիւնները կը հանդիսանային «բանտեր» մանուկներուն համար, ուր անոնք բռնի կը պարտէին, կ'ուսէին իրենց պարտադրուած կերակուրները, երկար ժամերով կը մնային ոչ առողջապահական պայմաններու՝ գոց դռներով ու պատուհաններով նեղ սենեակներու մէջ:

Անոնք կը ծառայէին իբրեւ վայր մը, ուր մայրեր կրնար իր զաւակը ձգել այն ժամերուն, երբ ինք գրագծած էր կամ գործի կ'երթար, սակայն մանուկը հոն ոչինչ կը սորվէր, այլ ընդհանրապէս ան կրնար նոյնիսկ ծծիլ եմթարկուիլ:

Այսօր իրողութիւնը շատ տարբեր է նախկինէն եւ ներկայիս մանկամտերը մանուկներուն համար սկզբնական դպրոցներ կարելի է նկատել: Բնական է, որ մանկամտերը եւս ունին իրենց մակարդակներն ու պայմանները, որոնք կրնան ուղղակիորէն կապ ունենալ գանձուած գումարին հետ:

Լիբանանի մէջ անժխտելի երեւոյթ է մանկամտերներու գոյութիւնը գրեթէ բոլոր շրջաններուն մէջ, իսկ կարգ մը վայրեր, ուր անոնց գոյութեան յաւելեալ կարիք կը գագոցուի, հաստատութիւնները կը սկսին բուսնիլ ամէն կողմ եւ թիւը կը բազմանայ: Մանկամտեր արձանագրուելու գիները կը տատանին 50 հազարէն 450 հազարի միջեւ:

Լիբանանեան մանկամտերը կրնան յաճախել մէկ ամսուան նորածինէն մինչեւ 3 տարեկան մանուկները:

50էն 100 հազար գանձող մանկամտերները ընդհանրապէս տուներու կամ հին շէնքերու յարկաբաժիններուն մէջ բացուած մանուկներու հաւաքակայրեր են, որոնց ուսուցիչները կիներ կամ անգործ օրիորդներ են, որոնք այս աշխատանքը կը տանին իրենց ապրուստը ապահովելու համար: Այս կառույցներուն մէջ ընդհանրապէս մանուկները շատ լաւ խնամքի են հոգատարութեան չեն արժանանար: Որքան ալ մեծ ըլլայ անոնց թիւը, անոնք կը համախմբուին մէկ կամ երկու նեղ սենեակներու մէջ եւ ընդհանրապէս առանց պատուհան կամ դուռ բանալու՝ փոքրիկները կը խաղցնեն, կը կերցնեն իրենց ձեւերով: Շատ յաճախ կը պատահի, որ անոնք եւ իրենց դրացիները ժամերով միասին կը նստին սուրճի գաւաթի մը շուրջ, իսկ մանուկները կը խաղան, զարուծիւններ եւ վտանգաւոր շարժումներ կ'ընեն, եւ իրենք ոչ մէկ ձեւով կը հակազդեն: Այս տուներուն մէջ յատուկ բաժանմունքներ եւ ծրագրեր չկան, օրուան յայտագիրը ընդհանրապէս կախեալ կ'ըլլայ կնոջ կամ օրիորդին տրամադրութենէն: Հոն նաեւ չկան անհրաժեշտ դաստիարակական խաղալիքներ, գիրքեր եւ այլն:



Այս քիչ մը անձնական մանկամտերները ընդհանրապէս արտօնագիր չեն ունենար պետութեան կողմէ:

Երկրորդ բաժինին մէջ եղող մանկամտերները ընդհանրապէս պետական արտօնագիր կ'ունենան եւ իրականում կ'ունենան ծանուցումներ ընելու: Այս մանկամտերները, որոնք ընդհանրապէս շատ աւելի վստահելի են, քան՝ առաջինները, ունին իրենց յատուկ պայմանները, տարեկան ծրագիրը եւ գործելաձեւը:

Անոնք հաստատուած կ'ըլլան լայն տարածութեան վրայ, կ'ամբողջանեն առողջապահական եւ ապահովական բոլոր պայմանները, ինչպէս՝ մաքուր օդ, վտանգաւոր իրերէ զուրկ սենեակներ, փողոցէն հեռու պարտէզ, երկաթեայ ցանկապատով պատշգամ եւ այլն: Այս կառույցներուն մէջ ընդհանրապէս կ'իշխեն խմբակային ձեւով տարուած աշխատանքները: Մանուկները կը բաժնուին տարիքային խումբերու եւ անոնց թիւը 15ը չ'անցնիր, անոնք անպայման իրենց հետ կ'ունենան մէկ վկայեալ մանկավարժ - ուսուցչուհի եւ մէկ կամ երկու օգնական: Այս մանկամտերներուն մէջ կը գտնուին նաեւ համակարգիչով ու նոր խաղերով օժտուած սենեակներ, յատուկ ճաշասենեակ՝ իր պտուի սեղաններով եւ սնունդներով, օդասուն եւ ապահով նմանակներ, զոց եւ բացօթեայ խաղափայր - պարտէզներ, յատուկ սենեակ մը՝ հիւանդներուն համար, միշտ մաքուր եւ հակահետախուզուած լուացարաններ, որոնք պէտք է ամբողջովին անջատ ըլլան պաշտօնէութեան լուացարանէն:

Այս մանկամտերները ձեւով մը կը հանդիսանան մանուկներուն նախադպրոցական շրջանի վարժարան, ուր անոնք կը սորվին ինքնավարութեան ըլլալ, իրենք իրենց ուժերով վստահիլ, կը սորվին տարրական գիտելիքներ, գոյներ, ճիշդ բառերով արտայայտուիլ: Հիմնական պայման է, որ մանկամտերներուն մէջ մանուկները ծծիլ կամ բռնութեան չենթարկուին, ստանան անհրաժեշտ հոգատարութիւնն ու գործընթացը:

Վերջին քանի մը տարիներուն պետութիւնը որոշ փոփոխութիւններու ենթարկեց 1979ին դրած իր պայմանները եւ անոնց մէջ ընդգրկեց կառույցը ամէն տեսակ սարքերով եւ լաւ պայմաններով օժտելու կէտը, մանկավարժ ուսուցչուհիներու եւ հիւանդապահի մը գոյութիւնը եւ մանկամտերին մէջ մանուկին դիտելիքները եւ որոշ դաստիարակութիւն փոխանցելու պայմանը:

Փաստորէն այս կառույցները այսօր վերածուած են այնպիսի վայրերու, ուր մայր մը դպրոցի նման կրնայ վստահիլ իր զաւակը եւ յանձնել ուսուցչուհիին: Անոնք մեծապէս կ'օժանդակեն աշխատող մայրերուն, որոնք իրենց մանուկները հոս կամ հոն դնելու փոխարէն՝ կ'արձանագրեն զայն մանկամտերի մը մէջ եւ մնայուն կերպով զայն հոն կը տանին իրենց աշխատանքային ժամերուն: Մնողները նաեւ մանկամտեր կը զրկեն իրենց զաւակները, մանաւանդ առանձինները, որպէսզի անոնք ընտելանան այլ փոքրիկներու հետ յարաբերելու, խաղալիքներն ու իրենց իրերը ուրիշներուն հետ բաժնեկցելու եւ միջավայրի մէջ վարուելու ու գործակիցի սորվելու:

Մակայն այսօր այդ մանկամտերներուն օգտագործութիւնը հասած է ծայրայեղ աստիճանի, որովհետեւ շատ մը մայրեր իրենց զաւակներուն հոգատարութիւնը ամբողջութեամբ յանձնած են մանկամտերներուն կամ տան սպասուհիներուն՝ ձեւով մը դուրս ելլելով մայրական առաքելութենէն: Աշխատող մայրերէն բացի, կան կիներ, որոնք միայն իրենց անձնական հաճոյքին եւ կնիջական հաւաքներուն համար իրենց զաւակները կը դնեն հոն՝ ձեռքարկողով ստանց հոգատարութեան եւ գործընթացի «հոգէն»:

Մանկամտերները հաստատուած են լիբանանեան զանազան շրջաններուն մէջ եւ անոնք կը թեթեւցեն հեռու առօրեայ ունեցող մօր ծանրութիւնը, սակայն, միւս կողմէ, անոնք անուղղակիորէն պատճառ կ'ըլլան, որ մայրերն ու զաւակները հեռանան իրարմէ, որովհետեւ մօր փոխարէն՝ զաւակները յաւելեալ ժամեր կ'անցընեն ուսուցիչներուն եւ մանկավարժներուն հետ:

Երեւոյթն ու իրողութիւնը գործնական է եւ ներկայի կեանքի պայմաններուն բերումով անհրաժեշտութիւն կը նկատուի, սակայն այդ կառույցները նաեւ պէտք է օգտագործուին իբրեւ տեղ մը, ուր փոքրիկը կրնայ մնալ այն ժամերուն, երբ մայրը խիստ պէս զբաղած է եւ ոչ թէ մօրը հետ մնայ այն ժամերուն՝ երբ մանկամտըրը գոց է:

ՄՆՆԴԱԳԻՏԱԿԱՆ

Առողջ Մնայու Գաղտնիքները



ՈՒՏԵԼԻՔՆԵՐՆ ՈՒ ԶԱՆՈՆՔ ԲԱՂԱԳՐՈՂ ՏԱՐԲԵՐՈՒՄ ՔԱՆԱԿԸ

Պանիրի, մածուցի, միսի, խմիչքի, խմորեղենի, բանջարեղենի եւ պտուղի գանձագան տեսակներ...

Համեղ ուտելիքներու ցանկը երկար է եւ ախորժաբէր: Ուտելիքներ իրենց պարզ կամ հարուստ բաղադրութեամբ կը գրուեն մեզ եւ կը սնունդ, որ համեղները գանձը: Սակայն առողջ եւ բարեկէտ մարմին եւ հաւասարակշռուած ծանրութիւն ունենալու համար պէտք է ուշադրութիւն դարձընենք ուտելիքները բաղադրող տարրերուն, մասնաւորաբար անոնց ջերմութի բաճակին, որպէսզի կարենանք հաւասարակշռել գանձը:

Ատորեւ կը ներկայացնենք կարգ մը ուտելիքներ՝ գանձը բաղադրող տարրերով եւ ջերմութի բաճակով.

ՊԱՆԻՐԻ, ԿԱԹԻ ԵՒ ՄԱԾՈՒՆԻ ՏԵՍԱԿՆԵՐ

	ԲԱՆԱԿ (LM/MRG)	ԲՈՒՆԵՐՈՒԼ (LM)	CARBOHYDRATE (G)	ՃԱՊՊ (G)	ՓՐՈՒՅՆ (G)	ՋԵՐՄՈՒՄ (LACK)
Ողջոր պանիր	03	05,22	70,1	05,8	05,6	701
Երեւ պանիր	03	03	1	05,8	05,6	001
Զամապի պանիր	03	05,12	1	05,7	05,6	19
Չսոցր պանիր	03	33	1	05,9	05,7	221
Քրնմի պանիր	03	70,1	11	05,2	05,7	601
Ռոս Է պանիր	03	72	1	05,8	05,7	801
Ֆեթթա պանիր	03	72	70,1	05,6	03,4	08
Կուտ պանիր	03	43	70,1	05,8	05,7	801
Կրիլթ պանիր	03	33	1	05,9	05,2	521
Սոցաղէ պանիր	03	32	70,1	05,6	05,5	68
Փարմէզան պանիր	03	05,5	70,1	07,9	31	831
Ռիթթա պանիր	03	05,131	58,0	09,3	05,3	35
Չուիցերիական պանիր	03	05,72	70,1	00,8	41,1	311
Ճարպ պարունակող կաթ	442	33	11	8	8	941
Ռոս Է ճարպ պարունակող կաթ 2%	442	81	21	5	8	121
Քիչ ճարպ պարունակող կաթ 1%	442	01	21	3	8	09
Այլի կաթ	042	0	4	01	9	761
Սոյա կաթ	382	73	85	01	01	953
Միլքշէյք շոքոկայի վրայ	382	13	15	8	01	413
Միլքշէյք վանիլայի վրայ	331	85	13	51	5	762
Կանիլայէ պարփայտակ	722	4	71	1	31	621
Լուսն ճարպի մածուց	722	92	11	7	8	931
Ճարպով հարուստ մածուց	571	4	24	01	6	572
Քիչ ճարպ պարունակող սառած մածուց	05	21,2	1	5	6	47
Շալիքի	33	0	1	0	4	71
Շալիքիի ձերմուկը	03	0	1	0	4	71
Շալիքիի դոնոնց	71	21,2	1	5	3	95

ԶՈՎԱՅՈՒՅՑՉԻ ԵՒ ՏԱՔ ՈՒ ՊԱՂ ԽՄՈՂՔՆԵՐՈՒ ՏԵՍԱԿՆԵՐ

Ջոլա	053	0	83	1	0	151
Ջոլա (տայթ)	053	0	1	0	1	4
Կարգով պարտաստուած մարմինքի հիւթ	053	0	64	0	0	871
Սեւի ափ	053	0	53	0	0	141
Շուկիա ջուր	051	0	81	0	0	27
Փոքիթ ջուր	002	0	0	0	0	0
ԲՈՒՅԻ ցուր	002	0	23	0	0	421
Փոքիթով պարտաստուած խմիչքներ	051	0	92	1	0	09
Անուսի հիւթ (պահածոյ)	052	0	92	1	1	711
Խաղողի հիւթ (պահածոյ)	052	0	92	1	1	711
Նարինջի հիւթ (պահածոյ)	052	0	92	1	3	521
Սոսա	051	0	18	0	0	27
Լեմոնի հիւթ	051	0	81	0	0	27
Պտուղի հիւթ	051	0	54	0	51,0	861
Թէյ	051	0	1	1	0	2
Անիթիկան սուրճ	051	0	1	1	1	5-1
Սուրճ	05	0	1	1	1	5-1
Արագ պարտաստուած սուրճ	05	0	1	1	1	5-1

ՀԱՅԻ, ԵՓԱՇ ԱՆՈՒՇԵՂԵՆԻ ԵՒ ԸՆԴԵՂԵՆԻ ՏԵՍԱԿՆԵՐ

Ֆրանսական հաց	53	0	81	1	3	69
Հաց գանձագան տեսակի հատիկներ	52	0	21	1	3	36
Շուրի	32	0	0	1	3	36
Ապարակ հաց	06	0	33	1	5	561
Սպունգի նմանող կարկանդակ	34	2	62	4	1	931
Տրուս	56	66	04	2	4	881
Սպունգի «բլիթ»	24	0	52	01	1	291
1 հատ քրուսակ	82	0	91	2	5	071
Պարզ տոնաց	75	34	62	21	5	132
Անուշով պարտաստուած տոնաց	05	81	52	11	2	112
Տոնաց M հաթը E հաց	06	4	72	41	4	242
Տոնաց M հաթը E գանձագան տեսակի հոնտոնով պարտաստուած	75	0	62	1	4	431
Տոնացի թելով պարտաստուած Տոնաց M հաց	54	81	91	5	3	131
ՓՈՂ ԵՏԻ	54	61	91	6	3	031
Խճճուկ վայր	851	0	8	71	3	033
Տոնաց տիւնուկի	04	0	02	2	3	411
Տոնացի տիւնուկի	54	0	32	2	4	921
Տապակուած գոմարիներ (tortilla chips)	82	0	81	7	2	241
Բորոխի սառ	41	0	9	3	1	26
Բորոխի (nar BULA)	82	0	12	1	4	17
Երոզիլէս	82	0	42	1	2	801
Թուխ գոյճի բրինձ	951	0	54	2	5	612
Մեծ հատիկներով խաչած բրինձ	502	0	85	1	6	762

ԲԱՐԱ ԵՆՏԵՄԵԱՆ

Vivez en lumière!

G. AYANIAN & SONS
Dora, (01)255222/3/4/5/6 - Gemmayze, (01)447000-445396 - (03)627728/9
Fax: (01)265187-582357; E-Mail: gasons@dm.net.lb
www.ayanian.com

ՄԱՆԿԱՄԱՍՈՒՐՆԵՐՈՒ ՕՐԻՆՔԸ

8 Փետրուար 1979ին հրապարակուած կառավարական թիւ 1775 օրէնքը կը ճշդէ Լիբանանի մէջ մանկամտեր հաստատելու գլխաւոր պայմանները:

- Սենեակներու պատերուն բարձրութիւնը՝ 3 մետր:

- Օդի մաքրութեան ձեւն ու լուսաւորումը լաւապէս սերտուած ըլլան:

- Գետինը ծածկուած ըլլայ գորգով կամ մոթէթով:

- Պատերը ներկուած ըլլան այնպիսի ներկով մը, որ կարելի ըլլայ դիւրութեամբ մաքրել ու լուսիլ:

- Իւրաքանչիւր սենեակ ունենայ ջերմացնելու յատուկ վառարան:

- Ննջասենեակներուն մէջ տեղադրուած ըլլան հանգստաւէտ անկողնիներ, մաքուր բարձր եւ ծածկուածներ:

- Լաւապէս հոգ տարուի մանուկներուն մաքրութեան, եւ բաղնիքներն ու լուացարանները միշտ մաքուր ըլլան եւ ունենան տաք ու պաղ ջուր:

- Բաղնիքները իրարմէ անջատուած ըլլան միջնորմով (պատ, փայտ) եւ անոնք ըլլան փոքրիկներուն յատուկ: Պէտք է իւրաքանչիւր հինգ մանուկ միջին հաշուով մէկ բաղնիք ունենայ:

- Քաղով եւ տակաւին քալելու շնչած մանուկները դրուին անջատ խմբաւորումներու մէջ, եւ իւրաքանչիւր խմբաւորում ունենայ իրեն յատուկ խաղափայր:



Կնոջական

ԿԻՆ ԴԵՍԵՐ

ՍՐԲՈՒՀԻ ՏԻՒՍԱԲ

102 տարի առաջ (Յունուար 1901) մահացավ Սրբուհի Տիւսար, հայ առաջին գրագիտուհին, որ հայ կնոջ ընկերային եւ իրաւական կացութեան համար պայքարած է այնքան մեծ հաւատքով:

Եւրոպայի մէջ արդէն ֆեմինիզմի շարժումը բաւական ճամբայ կտրած էր, բայց Արեւելքի մէջ կինը ընդհանրապէս չունէր ընկերային ազատութիւն: Տիւսարի նպատակը եղաւ մեր մէջ մտցնել իրաւունքի եւ հաւասարութեան այդ գաղափարները, որոնց գլխաւորներն են հետեւեալները:

ա) Ինչպէս այրերը, նոյնպէս կիները աշխատանքի իրաւունք պէտք է ունենան:

բ) Կիները ազատ պէտք է ըլլան իրենց սեփական կամքով ամուսին ընտրելու:

գ) Կիները այր մարդոց հաւասար կրթութիւն պէտք է ստանան:

դ) Հայ կինը մեծ դեր ունի կատարելիք մեր հայրային եւ ազգային կեանքին մէջ:

Տիւսար այս գաղափարները արտայայտած է իր վէպերուն («Մայտա», «Սիրանուշ», «Արաքսիա կամ վարժուհին») հերոսներուն բերնով:

Սրբուհի Տիւսար անհատականութիւն ունեցող, եւրոպական կրթութիւն ստացած կին էր եւ գիտէր խօսքին մէջ դնել հեղինակութիւն եւ համոզում:

«Կինը միայն ընկերութեան զարգը պէտք է ըլլայ, այլ՝ նաեւ անոր օգտակար մէկ անհատը», կ'ըսէր Տիւսար:

Ֆեմինիզմի շարժումն էր ի վերջոյ մեզի համար ամէնէն էականը մնաց կիներու ուսման ազատութիւնը: Շնորհիւ Տիւսարի արծարծած առաջադէմ գաղափարներուն, հայ աղջիկները Պոլսոյ մէջ սկսան թաղային վարժարաններ յաճախել: Հիմնուեցան նաեւ զուտ աղջկանց վարժարաններ: Հետզհետէ հայ կինը ի վիճակի դարձաւ ոչ միայն երկրորդական ուսում ստանալու, այլ նաեւ համալսարանական վկայական ձեռք բերելու:

Այս առիթով, նշենք, որ Ս. Տիւսար ծնած է 1840ին, Պոլսու: Օտար կրթութիւն ստացած է, բայց կը փափաքի հայեցի կրթութիւն եւս ստանալ, եւ յատուկ դասեր կ'առնէ նշան Պէշիկթաշիեանէն:

Սրբուհի Վահանեան 1871ին կ'ամուսնանայ Ֆրանսացի երաժիշտի մը հետ եւ անոր անունով կը կոչուի Տիւսար:

Տիւսարի 18 տարեկան աղջիկը թոքախտէ կը մեռնի: Վշտահար մայրը չի տոկար այս հարուածին եւ հոգեկան ծանր ցնցումի ենթարկուելով՝ կը մահանայ 1901ին:

- ՄՏԱՇՈՒՄՆԵՐ՝ Ս. ՏԻՒՍԱՐԵՆ**
- Կիներ կրնայ երկար առեւ խորապէս տառապիլ: Այր մարդը անկարող է այդ բանին. կա մ'տառապանքէն կը մեռնի, կա մ' կը մոռնայ զայն:
 - Այր մարդուն համար իր սիրած կնոջմէն վեր կիներ կայ դեռ, միեւնոյն կնոջ համար իր սիրած մարդէն վեր բան մը չկայ:
 - Երբ մարդ իր իրաւունքները պաշտպանել չի գիտեր, արժանի չէ զանոց վայելելու:
 - Երբ մեր ծնողներուն արժանիքներով կը պարծենանք, ապացուցած կ'ըլլանք մեր անճանկան արժանիք չունենալը:

ASHJIAN TOURS

Ս. Սարգսի, Տեառնդնառաջի, Սեմ Վալըմբայ-նի եւ Ատառ օտներու առիթներով, երազային շրջապատայտ դէպի Կիպրոսի Լիմասոլ քաղաքը, 12ԵՄ 16 Փետրուար, 5 օր. օր մը Նիկոսիա, օր մը Լառնացա, օր մը Այանափա, օր մը Քաֆոս քաղաքները պտոյտներով, գիտնէ՛ք Pefkos 3 աստղանի պանդոկ փոխան 380 \$ միայն 260 \$, Apollonia 5 աստղանի պանդոկ փոխան 485 \$ միայն 350 \$:

Շեռ. 01-240654 եւ 03-233978:

www.lemagan.com

NEW: ARMENIAN CAUSE (HAY TAD)

L.Y.A. History - Martyrs - Chapters - RAZMIG - Research - Monthly News - A.R.F. History - Armenian History - Armenian Genocide - Chavakhk - Artesakh - Lisbon 5 - Armenians in Lebanon - links - Icons & photos.

ՄԵՐ ԶԱՄԱԿՆԵՐԸ ԵՒ ՄԵՆԵ

10Ի ՎՐԱՅ ՄԷԿ ԵՐԵԽԱՅ ՕՊԷՉԷ

Մասնագէտները չեն վարանիր համաճարակի մը նմանցնելէ սոնքութիւնը:

Բժշկական լուրջ ուսումնասիրութիւններու համաձայն, 6 - 12 տարեկան օպէզ երեխաներուն թիւը կրկնապատկուած է վերջին 20 տարիներուն ընթացքին:

ԱՌԱՋԻՆ ՅԱՆՅԱՒՈՐԸ ՊԱՏԿԵՐԱՍՓԻՒՆԸ

Նոյն ուսումնասիրութիւններուն համաձայն, պատկերասփիւռով եւ համակարգիչով տարած մեր զաւակները բաւարար մարզանք չեն ընեն, բաւարար չեն շարժիր, իսկ անշարժութիւնը գիրութիւն կը պատճառէ:

Միւս կողմէ, պատկերասփիւռու առջեւ երկար ժամեր անշարժ նստելէ բացի, մեր զաւակները զբաղելու համար կ'ուստեն բոլոր տեսակի վնասակար ուտելիքներ, ինչպէս՝ չիփս, պիտտակեղէն, փոփ-



բորն, սեմուիչ եւ կը խմեն նոյնքան վնասաւոր խմիչքներ, որոնք շաքարի «բոյն» են...

Բացի պատկերասփիւռէն, սխալ սննդառութիւնը, իր կարգին, աւեր կը գործէ: Հոս առաջին հերթին կը յիշուին մանուկներուն յատուկ կամար կ'ուստեն բոլոր տեսակի վնասակար ուտելիքներ, ինչպէս՝ չիփս, պիտտակեղէն, փոփ-

սանիւթերով, եւ հարուստ ուրիշներով, որոնք տարիներ ետք կը նպաստեն անհրաժեշտ ճարպի կուտակման:

Անշուշտ որ սոնքութիւնը միայն սխալ սննդառութեան եւ նստակեաց կեանքի հետեւանք չէ, բայց ընդունինք, որ ասոնք երեխային կեանքի առաջին տարիներուն մեծ ազդեցութիւն կը գործեն:

ԾԻՇԴԻ ԵՒ ՍԽԱԼ ԿԱՐԾԻՔՆԵՐ ԳԱՐԵՋՈՒՐԻՆ ՄԱՍԻՆ

Հինէն մեզի հասած եւ շատերուն սիրելի գարեջուրը որոշ առաւելութիւններ ունի եւ չի գրեցրներ քիչ քանակութեամբ խմելու պարագային:

ԳԱՐԵՋՈՒՐԸ ՔԻՉ ՋԵՐՄՈՒԺ ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԷ

ՍԽԱԼ. Իւրաքանչիւր 100 միլիլիթր միջին համաճարակէ 45 ջերմութ, իսկ 33 միլիլիթրնոց թիթեղ՝ 145 ջերմութ... հետեւաբար յաճախ խմուելու պարագային գարեջուրը կը գրեցրնէ:

ԳԱՐԵՋՈՒՐԸ ԿԱՐԵԼԻ Է ԽՄԵԼ ՈՐԵՒԷ ՋԵՐՄԱՍԻՃԱՆՈՎ

ՍԽԱԼ. Անիկա «ապրող», նուրբ եւ շատ զգայուն խմիչք է: Պէտք է զայն պահել զով տեղ մը, լոյսէն եւ տաքութենէն հեռու: Գարեջուրը պէտք է խմել 6-12 ջերմաստիճան պաղութեամբ առանց սառնոց աւելցնելու:

ԳԱՐԵՋՈՒՐԸ ՄԻՋԵԼ ԿՈՒ ՏՅՅ

ԾԻՇԴ. Այս յատկութիւնը շատ հինէն ծանօթ էր մարդկութեան: Հին յոյները գարեջուրը կը

համարէին դարման մարմնին թունաւոր նիւթերը արտաքսելու համար:

ԳԱՐԵՋՈՒՐԸ ԿԸ ՊԱՇՏՊԱՆԷ ՍԻՐՏՆ ՈՒ ԵՐԱԿՆԵՐԸ

ԾԻՇԴ. Շատ մը ուսումնասիրութիւններ հաստատած են, թէ գինիին կամ գարեջուրին նման խմիչքներ, չափաւոր սպառելու պարագային, կը նուազեցնեն սրտանօթային հիւանդութիւնները: Հոս կարեւորութեամբ կը յիշեցրնենք, որ սպառուած ալքոլի քանակութիւնը օրական 20-40 կրամը չանցնի: Իսկ 33 սանթիլիթրնոց թիթեղ մը 12 կրամ ալքոլ կը պարունակէ:

ՇԷԿ ԳԱՐԵՋՈՒՐԸ ՆՈՒԱՋ ՋԵՐՄՈՒԺ ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԷ

ՍԽԱԼ. Գարեջուրի բոլոր տեսակներն ալ ջերմութ կը պարունակեն եւ նոյնքան գիրցնող են: Անոնց գոյնին տարբերութիւնը արդիւնք է ծլած գարիին կրած ջերմաստիճանի փոփոխութիւններուն միայն:

«ԱՆԳՐԱՆԻԿ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՆ

Հ. Բ. Ը. Մ. - Հ. Ե. Ը.

ԵՐԱՇԵՏԱԿԱՆ ԸՆԴՄԻՋՈՒՄ - 1

«Նուազախումը՝ դարերու ընդմէջը»


Ֆրանսերէնով կը ներկայացնէ՝ **ԷԹԻԵՆ ԶԻՓԵԼԵԱՆ**

Այսօր՝ Հինգշաբթի, 23 Յունուար 2003, երեկոյեան ժամը 8:00իւ, Հ. Բ. Ը. Մ. «Տեմիրճեան» կեդրոն, Տրոյ յարկ:

www.hamazkayin.com

ԳԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ

Ի՞ՆՉՊԷՍ ԴԱՐՄԱՆԵԼ ՈՒՌԱԾ ԱԶՔԵՐԸ



Մեր կողմը անմիջապէս կը բացայայտեն մեր անբընութիւնը, գերզոգնութիւնն ու սթրէսը:

Անմարտողութիւնը, ծանր վիշտը, անբնութիւնը անմիջապէս կ'ազդեն մեր աչքերուն, որոնք կա՛մ կ'ուռնին, կա՛մ կը կարմրին եւ, բնականաբար, յոգնութեան նշաններ ցոյց կու տան:

Ահաւաստիկ դիւրին միջոցներ՝ այս անպատեհութիւնները դարմանելու համար:

ԹԵՅՅԸ

Թագեց նիւթով հարուստ թէյը «կը քաշէ» մորթին տակ անշարժացած ջուրը: Ուրեմն առէք թէյի ծրարիկներ (սաշէ), զանոնք նախ տաք ջուրի մէջ մխրճեցէք, ապա պաղեցուցէք, եւ երբ տաքութիւնը տանելի դառնայ, զանոնք գետեղեցէք ձեր կողմերուն վրայ:

ԿԱԾԸ

Պաղ կաթին մէջ թաթխուած զոյգ բամպակներ 10 վայրկեան գետեղեցէք ձեր ուռած կողմերուն վրայ եւ դուր ալ պիտի գարմանաք արդիւնքին:

ԿԱՊՈՒՏԻԿԸ (ՊԼԵՕԷ)

18րդ դարէն ի վեր կապուտիկ ծաղիկը ճանչցուած է իբրեւ աչքի լաւագոյն դեղը: Անիկա կը դարմանէ բորբոքած կամ դիւրագոյն աչքերը, ինչպէս նաեւ՝ աչքին տակ գոյացած «պարկերը»:

ՇՈՒՇՄԱՆ

Թէյի ծրարիկներուն մէջ շուշմայ լեցուցէք եւ զանոնք գետեղեցէք ձեր կողմերուն վրայ, շուրջ 15 վայրկեան: Հատիկներուն ծանրութիւնը կողմերուն վրայ հանդարտեցնող ազդեցութիւն պիտի գործէ:

ԽՈՐԱԳԻՐ

ԿԱՆԱԶ ԲԱԿԼԱՅՈՎ ՇՈՄԻՆ (Իտալական մասնագիտութիւն)

- Բաղադրութիւն՝ 6 անձի համար.
- 1 քիօ կանաչ բակլայ (սառած)
 - 200 կրամ շոմին
 - 6 ապուրի դգայ թարմ սեր
 - 1 կիտրոնի հիւթ
 - 100 կրամ կուտը հանուած սեւ ձիթապտուղ
 - Թարմ անանուխի քանի մը տերեւ
 - Աղ
- Պատրաստութիւն.
- Բակլայերը եռացած աղի ջուրի մէջ 10 վայրկեան եփել: Շոմինը մաքրել, լուալ եւ ցամքեցնել: Աղցանի խորունկ ամանի մը մէջ խառնել թարմ սերը եւ կիտրոնի հիւթը. աւելցնել աղը: Բակլայն քամոցի մէջ փոխադրել, եթէ կեղեւները փափուկ են՝ ձգել, այլապէս՝ կեղուել: Գաղջ բակլայն լեցնել աղցանի ամանին մէջ, աւելցրնել հում շոմինը, ձիթապտուղը եւ զգուշութեամբ խառնել: Երեսը զարդարել մանրուած անանուխով:

Պատրաստեց՝ ՇՈՒՇԻԿ ՄԱԻՍԱԳԱԼԵԱՆ

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

3ԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայկական Երեսփոխանական Գրասենյակը ամեն օր առաւօտեան ժամը 9:00Ե կտօրէ ետք ժամը 5:00 կ'ընդունի դիմումներ՝ հետեւեալ ծառայութիւններուն համար:

- 1) Հիւանդանոցային առողջապահական (ուիզարա եւ պետական հիւանդանոցային բուժում):
- 2) Ընկերային Ապահովութեան Ազգային Սնտուկ (Տաման):
- 3) Ծանր եւ երկարատեւ բուժման կարօտ հիւանդութիւններու դեղորայքի ապահովում:
- 4) Գաղթականներու նախարարութեան հետ առնչուող հարցեր:
- 5) Բնակարանային հարցերու նախարարութեան (խորհրդ) դիմումներ:
- 6) Աշխատանքի նախարարութեան հետ առնչուող հարցեր:
- 7) Զաղաքապետութիւններու հետ կապուած հարցեր:
- 8) Ընդհանուր Ապահովութեան Սպասարկութեան (ԱՏԷ Էլ Ասմ) հետ կապուած հարցեր:

Դիմողները պետք է ներկայանան «Ճաղդոյեան» կեդրոն, Երկրորդ յարկ, Երեսփոխանական Գրասենյակ եւ կամ նախքան ներկայանալը հեռաձայնել 01 - 259881 եւ 01 - 242582 քիւրուն:

Այսուհետեւ ամեն Հինգշաբթի առաւօտեան ժամը 9:00Ե 11:00 Երեսփոխանական Գրասենյակ ներկայ պիտի ըլլայ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովսեփեան, որ պիտի ընդունի քաղաքացիներու դիմումները:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՃԱՆՔԱԿԱՆ ԳՐԱՏԵՆԵԱԿ

Հ. Մ. Ը. Մ. ԱՆԹԻԼԻԱՍԻ
ՄԱՍՆԱԺՅՈՒՂ

«ԱՐԱՐԱՏ»

ՖԻԼՄԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ

Տեղի կ'ունենայ Կիրակի, 26 Յունուար 2003, երեկոյան ժամը ճիշդ 7:30ին, Planet Zouk-ի մէջ:

ԿԱՐՉՈՒԹԻՒՆ

«ԱՉԳԱԿ»Ի ՄԷՁ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»-ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուագն օր մը առաջ, ՄԻՆՁԵԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 5:00:

ՄԱՀԱՉԳԻՆԵՐԸ բացառութիւն են: Մահազո կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ գայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ԽԱՉԲԱՌ ԹԻՒՒ 5351 Պատրաստեց՝ Տ.Մ. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ	ՈՒՂԱՇԱՅԵՏ
1. Բուռնացի հարուած - Հանրաճաշ:	1. Տիպար:
2. Ճարտարութիւն - Յետոյ:	2. Չայնական տառեր - Հայ դիցուհի - Մակրայակերտ մասնիկ:
3. Տգէտ, անուս:	3. Խիւս - Չորցուած թրիք:
4. Կեղծ, շինծու:	4. Կողոպուտ - Մարիամի թագաւորներէն:
5. Լման կտոր - Բուշնայ, վայրի վրդ:	5. Ա. Մ. Նահանգներէն - Թաղար:
6. Կրկնուած բաղաձայններ:	6. Տոպրակ - Իզական օտար անուն:
7. Այբուբենէն - Մաթենիկ թագուհիին զեղը:	7. Ճնշուած պայթիլ - Փոխադրէ:
8. Վառ դոյներով պատուական քար - Ճուկան:	8. Յուցական դերանուն:
9. Մեծ եկեղեցի - Փորբացնող մասնիկ:	9. Չեղոյս - Յուցական անական - Ժամանում:
10. Դանդաղաշարժ - Էական բայ:	10. Չար, վատտան - Արարական թերակղզի:
11. Չորցուած պտուղ - Կարեւոր:	11. Որմ - Խարազան:

ԹԻՒ 5350

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Լ	Ի	Ս	Ս	Ի	Ս	Ի	Ս	Ի	Ս
2	Ա	Ր	Օ	Ս	Ի	Ս	Ի	Ս	Ի	Ս
3	Կ	Ի	Ս	Ս	Ի	Ս	Ի	Ս	Ի	Ս
4	Ա	Ս	Ի	Ս	Ի	Ս	Ի	Ս	Ի	Ս
5	Ն	Ա	Ր	Ի	Ս	Ի	Ս	Ի	Ս	Ի
6	Կ	Ի	Ս	Ս	Ի	Ս	Ի	Ս	Ի	Ս
7	Ս	Ի	Ս	Ի	Ս	Ի	Ս	Ի	Ս	Ի
8	Ա	Ս	Ի	Ս	Ի	Ս	Ի	Ս	Ի	Ս
9	Ս	Ի	Ս	Ի	Ս	Ի	Ս	Ի	Ս	Ի
10	Ի	Ս	Ի	Ս	Ի	Ս	Ի	Ս	Ի	Ս
11	Թ	Ա	Ր	Ի	Ս	Ի	Ս	Ի	Ս	Ի

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրուքի սակարանին մէջ օտար դրամահիշներու փակման սակագիները հետեւեալներն էին երէկ.

Սուրիական թղթակի	32,20 - 32,30 լ.ն.
Իրաքեան տինար	4885,00 - 4895,00 լ.ն.
Քուէթեան տինար	5000,00 - 5025,00 լ.ն.
Յորդանանեան տինար	2103,00 - 2113,00 լ.ն.
Պահրէյեան տինար	3957,00 - 3982,00 լ.ն.
Ա.Մ. Էմիրութեան տիրիւս	407,70 - 409,75 լ.ն.
Քաթարեան դիւլ	410,75 - 412,75 լ.ն.
Սէուտական դիւլ	399,00 - 401,00 լ.ն.
Օմանեան դիւլ	3867,00 - 3892,00 լ.ն.
Եգիպտական կինէ	288,00 - 298,00 լ.ն.
Մնգիական սթրիլին	2413,00 - 2423,00 լ.ն.
Չուիքերիական ֆրանք	1094,00 - 1099,00 լ.ն.
Թրքական լիրա	90,50 - 91,00 լ.ն.
Կիպրական փաուստ	2755,00 - 2780,00 լ.ն.
Ճափոնական հայար եէն	12,60 - 12,70 լ.ն.
Ափրիկեան հայար ֆրանք	2,60 - 2,65 լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1514,00 լ.ն.
Քանադական տոլար	975,00 - 980,00 լ.ն.
Աւստրալիական տոլար	873,00 - 878,00 լ.ն.
Եւրօ	1602,00 - 1612,00 լ.ն.

● ՈՍԿԻ

Անգլիական մէկ ոսկի	135,000 - 140,000 լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	126,000 - 131,000 լ.ն.
Օսմանեան մէկ ոսկի	112,500 - 117,500 լ.ն.
Մեքսիկական փէսոս	637,500 - 657,500 լ.ն.
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի	17,230,000 - 17,430,000 լ.ն.
Մէկ օսն ոսկի	359,00 - 359,50 \$
Մէկ օնս արծաթ	4,80 - 4,82 \$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.

Եւրօ	1.0711 - 1.0716
Քանադական տոլար	1.5315 - 1.5325
Ջոիքերիական ֆրանք	1.3644 - 1.3654
Ճափոնական եէն	118.13 - 118.17
Մէկ սթրլին	1.6126 - 1.6136
Մէկ տոլար	586 դրամ

● ՍՈՒԽՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ

Գիմի Ա. ճշդում	Գիմի Բ. ճշդում	
Ա. կարգ	4 7/8	5
Բ. կարգ	4 7/8	5 2/8

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԱՌԱՔԵԼ ԳԱՍՊԱՐԵԱՆԻ (մահացած՝ Հալէպ) մահուան քառասունօրեան առիթով, հոգեհանգրստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 26 Յունուար 2003, Սոր Մարաշի Սրբոց Զոտանցից Մանկանց եկեղեցւոյ մէջ, լաւարտ Ս. Այատարագի:

☆Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ☆

☆ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ)

Ձեր մտքին մէջ հարց մը ունեւիք, բայց չէիք արտայայտուել այդ մասին: Հիմա կ'ուզեք յայտնել գայն, բայց թիչ մը ուշ: Լաւատես եղէք եւ զուարթ:

☆ՅՈՒԼ (21 Ապրիլին 21 Մայիս)

Օրուան ընթացքին ամէն մարդ, որ ձեր շուրջը կը գտնուի, պիտի կատարէ իր պարտականութիւնը, եւ ձեր վրայ պիտի ձգուի հարցերը կազմակերպելու պատասխանատուութիւնը: Այս վարուելակերպը այնքան ալ հանելի պիտի չբուի ձեզի:

☆ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսին 21 Յունիս)

Այսօր աղուր ժամանակ պիտի անցընէք ձեր գաւակներուն կամ թոռնիկներուն հետ զուարճանալով: Պիտի ափսոսաք, որ անոնք կը մեծանան ու մանկութիւնը վերջ կը գտնէ:

☆ԿԵՅԳԵՏԻՆ (22 Յունիսին 23 Յուլիս)

Ընտանեկան ճաշի մը ընթացքին անակնկալ տրամադրութեամբ գէշ կատակ մը պիտի ընէք, որուն համար անշուշտ պիտի զոջաք: Դուք ձեզ բնական պահեցէք, որպէսզի օրուան հանելի մթնոլորտը չխանգարուի:

☆ԱՌԻԻՎ (24 Յուլիսին 23 Օգոստոս)

Աշխատանքի վերաբերեալ, ձեր ասպարէզին բերումով պիտի կատարէք տեղափոխութիւն մը, ուր անակնկալ կերպով պիտի հանդիպիք անձի մը, որուն հետ պիտի կապուիք շեք մ սիրով:

☆ԿՈՅՍ (24 Օգոստոսին 23 Սեպտեմբեր)

Օրը շատ նպաստաւոր է տնտեսական տեսակետով: Պիտի կարենաք օգտաւատ գործեր կատարել, առանց յոգնելու պիտի կարենաք խնդիրներ կարգադրել: Օրը յեղադ է:

☆ԿԵԻՌԻՔ (24 Սեպտեմբերին 23 Հոկտեմբեր)

Երկար ատենէ ի վեր դուք ձեզի հանոյք չէք շնորհած: Այսօր կատարեցէք այդ իրաւունքի բաժինը, իրագործելով ձեր փափաքը՝ աղուր պտոյտով մը:

☆ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերին 23 Նոյեմբեր)

Դործնապաշտ մտքով ձեր կարողութիւնը պիտի օգնէ ձեզի, որ դիւրութեամբ դիմակայէք օրուան ընթացքին ստեղծուած տաղտուկները: Հարցերը թեթեւի առէք:

☆ԱՂԵՂՆԱՒՈՐ (24 Նոյեմբերին 21 Դեկտեմբեր)

Ձեր բարեկամները պիտի օգնեն ձեզի, որպէսզի բարձրանա ձեր տրամադրութիւնը: Պիտի ձեր բազմապիսեղ զոջանքի հոգիք եւ որոշ տագնապներէ:

☆ԱՅՄԵՂՋԻԻՐ (22 Դեկտեմբերին 20 Յունուար)

Աշխատանքի մէջ պիտի գգաք, թէ հոզ կը փչէ ի նպաստ ձեզի: Դուք ձեզի ցոյց տուէք հանդուրժողութեամբ եւ համակերպեցէք ձեր շուրջիներուն, առանց անպարսկելու:

☆ԾՈՎԱՆՈՅԸ (21 Յունուարին 19 Փետրուար)

Եթէ ուսանող էք, մեծ քայլով պիտի յաջողիք յառաջդիմել: Նոյնպէս՝ եթէ գործի ասպարէզի մարդ էք, պիտի ունենաք որոշ յաջողութիւն: Հաւանաբար նոյն ձեռով շարունակուի այս ընթացքը:

☆ԶՈՒԿ (20 Փետրուարին 20 Մարտ)

Եթէ քիչ մը զգուշաւոր ըլլաք, օրը պիտի բերէ նպաստաւոր պայմաններ, մասնաւորաբար տնտեսական մարդիկ մէջ: Ուրեմն եղբ քործնական եւ հետեւողական:

ՕՐԱՏԵՐ

ՓԱՌԱՏՕՆ / ՑՈՒՑԱՀԱՆԳԵՍ / ԶՐՕՍԱՇՐՋՈՒԹԻՒՆ

ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԵԱՆ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՅՆՈՂ ՑՈՒՑԱՀԱՆԳԵՍ ՄԸ

Միջերկրական ծովը եզերող քաղաքներուն եւ մշակոյթներուն յատուկ նմանութիւնները սեւի ու ձերմակի երանգներով ներկայացնող լուսանկարներու ցուցահանդէս մը է սպանացի լուսանկարիչ Խուսեա Վալպունեան Քարապաւայի «Լա անյա ֆրոնթերա» («Լայն սահմանը») թեմայով ցուցահանդէսը, որ կազմակերպուած է սպանական մշակութային «Աերվանթես» հիմնարկին կողմէ:

17 - 25 Յունուարին տեղի ունեցող այս ցուցահանդէսին լուսանկարները կը ներկայացունեն միջերկրականեան քաղաքներու առօրեայ կեանքին պատկերներ: Սուրբիս սկնարկով անոնք կը բերին Պէյրուքի առօրեային լուսանկարներէն, սակայն կրնան միասնամասն ըլլալ Միջերկրականը եզերող քաղաքներէն որեւէ մէկուն



տեսարաններ: Լուսանկարիչ արուեստագէտը տարիներ շարունակ շրջած է միջերկրականեան քաղաքներ՝ նախահանգիստ քաղաքներու առօրեան իր ուսանելի մեջ խոստացնելու առաջադրանքով: Անոր նպատակը եղած է, ծովը - երաժշտական երեկոյ «Հարմոնի տր սուար», ճիւր-սեմեկային երաժշտութիւն, ժամը 18:30ին, Ֆրանսական մշակութային կեդրոնին մէջ:

Մուսթաֆա Գարուքի նուիրուած ցուցահանդէս. Սրբոց թագաւորին մէջ, ժամը 10:00Ե մինչեւ ժամը 13:00, Երեկոյան ժամը 16:00Ե մինչեւ 19:00, մինչեւ 8 Մարտ:

Պարային ներկայացում, Քարապաւայի «Տեօ միլ է իւն ճուի», ժամը 20:00Ե, «Պիէլ»-ի մէջ: Ելոյթները կը շարունակուին մինչեւ 31 Յունուար:

ՀՆՈՒՏԵՍԻԼ

ԹԷ. ԷԼ. 9:00 - Մապաի 12:00 - Շիֆր է 12:30 - Դանիլի ղանիլի 13:00 - Մարյու հանա 14:00 - Եւրոպիայ 14:30 - Լուրեր 15:00 - Մըշուար 17:00 - Ֆիլմաշար 18:30 - Ազգային վիճակահանութիւն 19:30 - Արար. Լուրեր 20:00 - Ամերիկեան ֆիլմաշար	20:30 - Թուսուս մութահարիւս 20:35 - Տրխան ու մարա 21:30 - Ամերիկեան ժապաւէն «Արմակետը» 23:30 - Ֆրենտու	13:25 - Երկնքից երեք հոլովակ ընկաւ 13:35 - Աիթմ եւ պոլու 13:55 - Նորատետր 14:00 - Լուր 14:05 - Երաժշտական ալիք 15:00 - Հայլուր 15:20 - «Արեւիկ» 16:00 - Հեռուստատեսիայի «Միտոյ կախարդանք» 17:00 - Երեկոյեան Երեւան 17:20 - Տեսաֆիլմ «Ուխտագնացութիւն դէպի Ջուարիք» 18:00 - Այլուր 18:10 - Անցեալը ներկան է 18:35 - Տուս-տունիկ 19:00 - Հայլուր 20:00 - Բոհեմ 20:35 - Հայէր 21:00 - Թուսիքոն+ 22:00 - Հայլուր 22:20 - Կէսգիշերային ձայնաքաղ 23:20 - Հայլուր (ռուսերէն) 23:25 - Հայլուր (անգլերէն) 23:30 - Երեկոյեան Երեւան 23:45 - Այլուր 00:00 - Լուր 00:05 - Երաժշտական ալիք 01:00 - Լուր 01:05 - Ակունք (դասական երաժշտութիւն) 01:25 - Երկնքից երեք հոլովակ ընկաւ 01:35 - Աիթմ եւ պոլու 01:55 - Նորատետր 02:00 - Լուր 02:05 - Երաժշտական ալիք 03:00 - Հայլուր 04:00 - «Էտտաուիզ» առեղծուածը 04:45 - Տեսաֆիլմ «Ուխտագնացութիւն դէպի Ջուարիք» 05:25 - Անցեալը ներկան է 05:50 - Այլուր
---	---	---

ՄՈՒՍԹԱՔՄԱԼ 7:00 - Լուրեր 9:00 - Այամ ալ սապահ 11:00 - Այմաթայախ 13:00 - Ֆիլմաշար 13:05 - «Ճէլըն քրես» 14:00 - Ազգային յուրեր 14:20 - Ֆրանսերէն յուրեր 14:40 - Հայերէն յուրեր 15:00 - Լուրեր 15:30 - Վիտէօ քիփս 16:00 - Թէլեթայիկ 16:30 - Ըզդար ըջպար 17:30 - Արաբական ֆիլմաշար 19:00 - Ասհապ 20:00 - Արաբերէն յուրեր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՀԵՌՈՒՍՏԵՍԵՍՈՒԹԻՒՆ 06:00 - Առաջին ծրագիր 07:00 - Հայլուր 07:20 - Առաջին ծրագիր 08:30 - Մանրամասներ 08:45 - Առաջին օգնութեան դասընթաց. Սուր որովայն 09:00 - Հեռուստատեսիայի «Միտոյ կախարդանք» 09:45 - Կէսգիշերային ձայնաքաղ 10:40 - Իմ սէր, իմ հաւատ, իմ կեղեցիկ 11:00 - Հայլուր 11:20 - Թուսիքոն+ 12:00 - Լուր 12:05 - Երաժշտական ալիք 13:00 - Լուր 13:05 - Ակունք (դասական երաժշտութիւն)

ԱՉԳԱԿ 50 ՏԱՐԻ ԱՌԱՅՈՒ 29 Հոկտ. 1952

ԿԱՐԳԸ ՎՐԱՅԻ ԲԵՐԻԱՅԻՆ ԵԿԱԻ «ՓՐԱՄԱ»Ի ԼՈՒԻՐՈՒՄԸ ՀԱՍԱԶԱՅՆ, ՓՈԼԻԹՊԻՒՐՈՅԻ ԱՆՂԱՄ ԵՒ ԶԵԿԱՅԻ ՊԵՏ ԸՐԵԱՅ - ՎՐԱՅԻ ԼԱԻՐԵՆԹԻ ԲԵՐԻԱ ՆՈՐ ՍԱԲԸՎՈՐԾՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՁՈՐԸ ՊԵՏԻ ԸԼԼԱՅ

«Փրամա» կը գրէ, թէ ապահովութեան եւ գաղտնի սպասարկութեան շարքերուն մէջ մաքրագործումներ պիտի կատարուին:

Կը կարծուի, թէ նմա քաղաքագործման թիւ 1 գոնը պիտի ըլլայ Սթալինի մօտակ գործակիցներէն եւ Փոլիթբյուրոյի անդամ Մեւտեի (Չեկա) նախագահ Լաւրենցիի հետ, որ մինչեւ իր շրջապատը, այսօր մաքրագործումները սկսելէն մինչեւ վերջին ամիսներուն, Սթալինի վստահութիւնը կը վաշտելէ:

Շատ հաւանական կը նկատուի, որ հրեայ բժիշկներուն պարագան Մալենկոյ մէջ տեղի հանցը՝ Չեկայի նախագահ հրեայ Բերիայի մաքրագործման գետնի պատրաստուելու համար: Վերջին 4 տարիներուն ընթացքին, իբրեւ Սթալինի յաջորդ երեքներու խումբ մը մէջ տեղի կը մնար, Սթալինկրատի հերոս եւ «Թիբո»

ողբերգութեան յանցաւոր Ամարէ Ժտանովի մահէն ետք: Այս երեքներէ

